***ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ***
***16.11.2021***
***2021 թ. նոյեմբերի 2-ի վերաֆինանսավորման փոկոսադրույքի արձանագրություն***

2021 թվականի նոյեմբերի 2-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալներ Ներսես Երիցյանը և Վախթանգ Աբրահամյանը, խորհրդի անդամներ Արթուր Ստեփանյանը, Հասմիկ Ղահրամանյանը, Հովհաննես Խաչատրյանը, Դավիթ Նահապետյանը, Արտակ Մանուկյանը:

Խորհրդի նիստը սկսվեց նոյեմբերի 2-ի դրությամբ Իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային, ֆինանսական և դրամավարկային հատվածների զարգացումները:

Արձանագրվեց, որ 2021թ. սեպտեմբերին գրանցվել է 0.1% գնանկում՝ նախորդ տարվա նույն ամսվա 0.2% գնանկման դիմաց, որի պարագայում **12-ամսյա գնաճը մնացել է գրեթե անփոփոխ՝ ամսվա վերջին կազմելով 8.9%:** Ամսվա գնանկումը հիմնականում պայմանավորվել է «Սննդամթերք, խմիչք և ծխախոտ» ապրանքախմբի գների 0.54% նվազմամբ, որի կառուցվածքում զգալի անկում է դիտվել միրգ և բանջարեղեն ենթախմբի գների մասով՝ ընդհանուր հաշվով 5.2%: Սեպտեմբերին ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.71%-ով, իսկ ծառայությունների գները նվազել են 0.05%-ով: Ամսվա ընթացքում **12-ամսյա բնականոն գնաճը** շարունակել է ցուցաբերել կայուն վարքագիծ՝ պահպանվելով 8.0%-ի շրջակայքում:

Ներկայացվեցին արտաքին հատվածի ընթացիկ զարգացումները, որոնց համաձայն ՀՀ հիմնական գործընկեր երկրներում, ԿԲ կանխատեսումներին համահունչ, շարունակվում է տնտեսական ակտիվության և համախառն պահանջարկի վերականգնումը: Դա տեղի է ունենում կորոնավիրուսի նոր տեսակի բավականին արագ տեմպերով տարածման պայմաններում, ինչի բացասական ազդեցությունը տնտեսության վրա, պատվաստանյութերի ակտիվ կիրառման ֆոնին, հիմնականում չեզոքացվում է խիստ սահմանափակումներից հնարավորինս խուսափելու արդյունքում: Միաժամանակ փաստվեց, որ համաշխարհային պահանջարկի արագ տեմպերով վերականգնմանը զուգահեռ մի շարք առաջարկի գործոններով պայմանավորված՝ ապրանքահումքային միջազգային շուկաներում դիտվում է գնաճային միջավայրի զգալի ընդլայնում: Մասնավորապես, նավթի միջազգային շուկայում և պարենային ապրանքների առանձին խմբերում սահմանափակ առաջարկի վերաբերյալ ձևավորված սպասումները նպաստում են այդ ապրանքների գների բարձր մակարդակների պահպանմանն ու որոշակի գնաճային միտումների ձևավորմանը: Նման իրավիճակում ՀՀ գործընկեր երկրներում դիտարկվում են կանխատեսումների համեմատ ավելի բարձր գնաճային զարգացումներ, իսկ ԿԲ-ները, գների կայունության ապահովման նպատակով, արդեն նախանշում կամ իրականացնում են դրամավարկային պայմանների խստացման քաղաքականություն:

Խորհուրդը քննարկեց ՀՀ տնտեսության զարգացումները և արձանագրվեց, որ ընթացիկ միտումները նախանշում են կանխատեսումների համեմատ ավելի թույլ ակտիվության մասին՝ հիմնականում պայմանավորված գյուղատնտեսության ճյուղի անկմամբ: Բացի դրանից, ըստ ԿԲ գնահատման, համավարակի ներկայիս ընթացքը՝ պատվաստումների դանդաղ տեմպերի պայմաններում, տարեվերջին որոշակի զսպող ազդեցություն կունենա ծառայությունների ճյուղի և մասնավոր սպառման վրա: Այդուհանդերձ, ներքին պահանջարկի դրական զարգացումները պահպանվում են՝ հիմնականում պայմանավորված մասնավոր խնայողությունների նվազման և արտասահմանից դրամական փոխանցումների աճի արդյունքում մասնավոր սպառման գրանցած բարձր աճով: Միևնույն ժամանակ, ըստ ընթացիկ գնահատման, 2021թ-ին հարկաբյուջետային ազդակը, սպասումներին համահունչ, կունենա որոշակի զսպող ազդեցություն: Սակայն տարեվերջին նախատեսվում է նախորդ ժամանակահատվածում տնտեսված որոշ ծախսերի իրականացում, որի արդյունքում զսպվող ազդեցությունը որոշակի կմեղմվի: Ներկայացվեց նաև, որ

«ՀՀ 2022թ-ի պետբյուջեի մասին» օրենքով նախատեսված են մեծածավալ կապիտալ ծախսեր, որի ամբողջական կատարման պարագայում 2022թ-ի հարկաբյուջետային ազդակը՝ ԿԲ նախորդ գնահատականի նկատմամբ կլինի ավելի քիչ զսպող: Նշվեց, որ, չնայած մասնավոր սպառման աճին, ներմուծման աճի տեմպերը մնում են զսպված, և արտահանման առաջանցիկ աճն ու արտերկրից ստացված դրամական փոխանցումների մեծ ծավալները շարունակում են նպաստել ընթացիկ հաշվի բարելավմանը:

Խորհուրդը քննարկեց ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները և արձանագրեց, որ հաշվետու ժամանակահատվածում կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքները ձևավորվել են ԿԲ քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Նշվեց, որ վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխություններն իրենց ազդեցություն են փոխանցել ֆինանսական շուկայի մյուս հատվածներին, մասնավորապես՝ պետական պարտատոմսերի եկամտաբերությանը և վարկավորման ու ավանդների տոկոսադրույքներին:

Խորհուրդն անդրադարձավ ձևավորված գնաճային զարգացումներին և գնաճային սպասումներին: Արձանագրվեց, որ վերջին ամիսներին գնաճային միջավայրի ձևավորմանը էապես նպաստում է սեզոնային պարենային ապրանքների գների՝ նախորդ տարիների համեմատ ավելի փոքր նվազումը, որի ազդեցությունը գնաճի վրա առաջիկայում կչեզոքանա: Միևնույն ժամանակ, գնաճային միջավայրին դեռևս շարունակում է նպաստել արտադրական կարողությունների ընդլայնման նկատմամբ մասնավոր սպառման առաջանցիկ աճը: Նշվեց նաև, որ, համաձայն ԿԲ կողմից իրականացված հարցման արդյունքների, գնաճի ապագա ընթացքի հետ կապված անորոշությունների գործոնը որոշակիորեն նվազել է՝ ցածր գնաճ սպասողների կշռի ավելացման հաշվին, ինչը փաստում է այն մասին, որ հասարակության գնաճային սպասումները դրսևորում են կայունացման նշաններ:

Իրավիճակային հաշվետվության և արտաքին ու ներքին մակրոտնտեսական զարգացումների վերաբերյալ քննարկումից հետո Խորհուրդն անցավ դրամավարկային քաղաքականության ուղղությունների քննարկմանն ու քաղաքականության տոկոսադրույքի որոշման կայացմանը: Հաշվի առնելով մի կողմից արտաքին և ՀՀ տնտեսություններում դեռևս պահպանվող գնաճային ազդեցությունները, իսկ մյուս կողմից վերջին շրջանում դրամավարկային պայմանների համեմատաբար մեծ քայլով խստացումների ընթացիկ և սպասվող ազդեցությունները՝ **Կանխատեսող թիմը Խորհրդի քննարկմանն էր ներկայացրել վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ թողնելու առաջարկ: Վերջինս ԿԲ Խորհուրդի կողմից ընդունվեց միաձայն, և որոշվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ:** Դրանով Խորհուրդը վերահաստատեց նախորդ տարեվերջից իրականացվող ապագային միտված և հետևողական քաղաքականության բավարար արդյունավետությունը՝ առաջանցիկ պահանջարկի կարգավորման, գնաճի զսպման և միջնաժամկետում գնաճի նպատակի ապահովման ուղղությամբ: Նման պայմաններում կանխատեսվում էր, որ չնայած մինչև տարեվերջ 12-ամսյա գնաճը կպահպանվի բարձր մակարդակում, 2022թ-ին կմոտենա նպատակային 4% ցուցանիշին և միջնաժամկետ հատվածում կկայունանա դրա շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում էր, որ տնտեսական հեռանկարների մասով դեռևս պահպանվող անորոշությունների ներքո կանխատեսված միջնաժամկետ ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հավասարակշռված են և դրանց դրսևորման պարագայում պատրաստ է համարժեքորեն արձագանքել՝ ապահովելով գների կայունության նպատակի իրագործումը:

Խորհուրդը հաստատեց ԿԲ գործիքների տոկոսադրույքների վերաբերյալ որոշումը և առաջարկվող մամուլի հաղորդագրությունը, որոնք կցվում են:

**Տոկոսադրույքի որոշում**

**ԿՈԴ**
**050.0160 L. 02.11.21**

**2 նոյեմբերի 2021 թվականի թիվ 160 Լ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ**

**ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո ր ո շ ում է.**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանել 7.25%:
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը սահմանել 8.75%:
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը սահմանել 5.75%:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային տնային էջում հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության**
**կենտրոնական բանկի նախագահ** **Մարտին Գալստյան**

2021 թ. նոյեմբերի 2
Երևան

**ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
**02.11.2021**

2021թ. նոյեմբերի 2-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ սահմանելով 7.25%:

2021թ. սեպտեմբերին արձանագրվել է 0.1% գնանկում՝ նախորդ տարվա նույն ամսվա 0.2% գնանկման դիմաց, որի պարագայում 12-ամսյա գնաճը մնացել է անփոփոխ՝ ամսվա վերջին կազմելով 8.9%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս սեպտեմբերին ցուցաբերել է կայուն վարքագիծ՝ պահպանվելով 8.0% մակարդակում:

Արտաքին աշխարհում, չնայած կորոնավիրուսի նոր տեսակի բավականին արագ տեմպերով տարածմանը, պատվաստանյութերի ակտիվ կիրառման և խիստ սահմանափակումներից հնարավորինս խուսափելու պայմաններում ՀՀ հիմնական գործընկեր երկրներում շարունակվում է տնտեսական ակտիվության ու համախառն պահանջարկի վերականգնումը: Պահանջարկի դրական զարգացումների ֆոնին հիմնականում առաջարկը սահմանափակող գործոններով պայմանավորված, հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում դիտվում է գնաճային միջավայրի զգալի ընդլայնում, ինչն արտացոլվում է նաև գործընկեր երկրների ներքին գնաճերի արագացման վարքագծում: Այս պարագայում արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունը պահպանվում է:

ՀՀ տնտեսության ընթացիկ զարգացումները նախանշում են կանխատեսումների համեմատ որոշակի ավելի թույլ ակտիվության մասին՝ հիմնականում պայմանավորված գյուղատնտեսության ճյուղի անկմամբ, ինչպես նաև համավարակի տարածման հերթական ալիքի հետևանքով ծառայությունների ճյուղի ակնկալվող դանդաղմամբ: Այդուհանդերձ, պահանջարկի դրական զարգացումները պահպանվում են, ինչին շարունակում է մեծապես նպաստել մասնավոր սպառումը՝ արտերկրից ստացվող դրամական փոխանցումների մեծ ծավալների և մասնավոր

խնայողությունների նվազման հետևանքով: Այս պարագայում ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ արտադրական կարողությունների ընդլայնման նկատմամբ մասնավոր սպառման դեռևս պահպանվող առաջանցիկ աճը շարունակում է նպաստել ներքին գնաճային միջավայրի պահպանմանը: Միևնույն ժամանակ, հասարակության գնաճային սպասումները դրսևորում են կայունացման նշաններ:

Չնայած արտաքին հատվածում և ՀՀ տնտեսությունում գնաճային ազդեցությունների պահպանմանը, ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախորդ տարեվերջից դրամավարկային պայմանների՝ ապագային միտված և հետևողական խստացումը բավարար ազդեցություն է ունենում առաջանցիկ պահանջարկի կարգավորման, գնաճի զսպման և միջնաժամկետում գնաճի նպատակի ապահովման ուղղությամբ: Ուստի, Խորհուրդը նպատակահարմար է համարում վերաֆինանսավորման տոկոսադրույքը ներկայումս թողնել անփոփոխ: Նման պայմաններում կանխատեսվում է, որ մինչև տարեվերջ 12-ամսյա գնաճը կպահպանվի բարձր մակարդակում, այնուհետև 2022թ-ին կմոտենա նպատակային 4% ցուցանիշին և միջնաժամկետ հատվածում կկայունանա դրա շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ տնտեսական հեռանկարների մասով դեռևս պահպանվող անորոշությունների ներքո կանխատեսված միջնաժամկետ ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հավասարակշռված են և դրանց դրսևորման պարագայում պատրաստ է համարժեքորեն արձագանքել՝ ապահովելով գների կայունության նպատակի իրագործումը:

**Տոկոսադրույքի մակարդակի որոշման հիմքում ընկած մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ մինչև 2021թ. նոյեմբերի 16-ին հրապարակվելիք Մամուլի հաղորդագրությունում (Տոկոսադրույքի արձանագրություն):**

---

*Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:*
*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*
*հեռ/ֆաքս. (010) 56 37 61*
*էլ-փոստ. mcba@cba.am*
*www.cba.am*